

2009 թվականը բավական բարդ ու հակասական տարի էր տնտեսական առումով: Այն հստակ ցույց տվեց ՀՀ տնտեսության ուժեղ եւ թույլ կողմերը, անելիքներն ու նվաճումները: Դժվար է չհամաձայնել կառավարության գնահատականին, որ դիվերսիֆիկացիայի եւ մրցակցության բացակայությունը մեր խոշորագույն մարտահրավերն է: Միաժամանակ՝ դժվար է թերագնահատել մակրոտնտեսական եւ ֆինանսական կայունության ներդրումը տնտեսության կենսունակության ապահովման գործում:

Մակրոտնտեսական քաղաքականության մինչճգնաժամային նվաճումներն էին, որ հնարավորություն տվեցին արագ մոբիլիզացնել արտաքին եւ ներքին զգալի ռեսուրսներ, պահպանել տնտեսական աճը չխաթարող գնաճային միջավայր եւ, որ շատ կարեւոր է, թե՛ ֆինանսապես, թե՛ վարկունակ քաղաքականության տեսակետից պահպանել ֆինանսական համակարգի կայունությունը:

Գլոբալ պահանջարկի նվազման, արտահանվող հանքահումքային ապրանքների գնանկման եւ ծավալների կրճատման, ինչպես նաեւ Հայաստան ներհոսող տրանսֆերտների նվազման պայմաններում ՀՀ տնտեսությունը վեր-

ջին 14 տարիների ընթացքում առաջին անգամ անկում ապրեց: Համաշխարհային ճգնաժամի ազդեցությունը Հայաստանում սկսեց արտահայտվել արդեն 2008թ. չորրորդ եռամսյակից՝ լուրջ մարտահրավերներ ստեղծելով ՀՀ տնտեսության համար:

Այդ պահին խիստ կարեւոր էր ճիշտ գնահատել ՀՀ տնտեսության առավելություններն ու թերությունները, սպառնացող վտանգները եւ ճգնաժամի հնարավոր ազդեցությունները՝ իրավիճակից նվազագույն կորուստներով դուրս գալու համար: Ընդհանուր առմամբ՝ կարելի է արձանագրել, որ Կառավարությանը եւ Կենտրոնական բանկին դա հաջողվեց:

Տարեսկզբին, ճգնաժամի սկզբնական փուլում, գների կայունության եւ ֆինանսական կայունության նպատակների արդյունավետ համադրման միջոցով հաջողվեց պատշաճ մակարդակում պահպանել ֆինանսական համակարգի կայունությունը՝ խուսափելով անհարկի ցնցումների առաջացումից: Ֆինանսական կայունության ապահովումը հնարավոր եղավ առանց պետության կողմից գոնե մեկ ֆինանսական ինստիտուտի օժանդակության, ինչից չկարողացան խուսափել զարգացող, նույնիսկ զարգացած շատ երկրներում:

ՀՀ տնտեսական քաղաքականությունը արդյունավետ է

Արթուր ՉԱՎԱԴՅԱՆ

Հայաստանի
Հանրապետության
կենտրոնական
բանկի
նախագահ





Հուլիսին, ավելի քան 18% տնտեսական անկման պայմաններում, գիտակցաբար շեշտադրվեց տնտեսական ակտիվության հնարավորինս խթանումը՝ իրականացնելով գների կայունության սահմանային նշածողին ընդհուպ մոտեցող ընդլայնողական դրամավարկային քաղաքականություն: Ընդլայնողական քաղաքականությունը բնութագրվեց ոչ միայն վերաֆինանսավորման տոկոսադրույքի 2.75 տոկոսային կետով նվազեցմամբ, այլև հակաճգնաժամային եւս մեկ կարելորագույն՝ ծավալային ընդլայնման քաղաքականությամբ:

Ի լրումն ընդլայնողական դրամավարկային քաղաքականության՝ լայնածավալ աշխատանքներ իրականացվեցին ֆինանսական համակարգն աշխուժացնելու ուղղությամբ: Կառավարության աջակցությամբ բանկերն իրականացրին թե՛ փոքր եւ միջին, թե՛ խոշոր բիզնեսի վարկավորման անսխառեղ ծրագիր: Այս ծրագրի կատարիտիկ բնույթի վառ ապացույցն է այն փաստը, որ 2009-ի երկրորդ կիսամյակում, ի համեմատ առաջին կեսի, բանկերի կողմից տրամադրվող վարկերի ծավալները աճեցին շուրջ երկու անգամ՝ նույնիսկ գերազանցելով 2008թ. համապատասխան ծավալը: Վերոնշյալ գործողությունների արդյունքում նվազեցին նաեւ վարկավորման տոկոսադրույքները՝ ապահովելով տնտեսավարողների համար միջոցների հասանելիությունը եւ նպաստելով իրական հատածի արագ վերականգնմանը: Ընդ որում՝ այս զարգացումները տեղի էին ունենում սպառողների պաշտպանվածության գնալով ավելի բարձր մակարդակի, գործարքների եւ պայմանագրերի առավել թափանցիկության պարագայում:

ԿԲ գործողությունների արդյունքում զգալի աշխուժացավ միջբանկային վարկերի շուկան՝ նպաստելով շուկայում իրացվելիության հավասարաչափ վերաբաշխմանը եւ անցակալի տատանողականության նվազմանը:

Տնտեսական անկման պայմաններում, երբ նվազել էին բյուջետային եկամուտները, ՊՊ երկրորդային շուկայում ԿԲ ակտիվ աջակցությամբ կառավարությանը հաջողվեց գերակատարել բյուջեի դեֆիցիտի ներքին աղբյուրներից ֆինանսավորումը: Այլ

ռեսուրսների ներգրավման հետ համատեղ, դա կառավարությանը հնարավորություն տվեց իրականացնել հակաճգնաժամային կարելորագույն քաղաքականություն, այն է՝ 2009թ. լիովին իրականացնել 2008թ. համեմատ բավական աճած սոցիալական բնույթի բոլոր ծախսերը:

Զգալի աշխատանքներ իրականացվեցին հիպոթեկային շուկայի զարգացման ուղղությամբ: Այս առումով կարելոր քայլ էր «Ազգային հիպոթեկային ընկերության» հիմնադրումը, որն առանցքային դեր ունեցավ երկրորդ կիսամյակում հիպոթեկային շուկայի աշխուժացման առումով:

Բանկերի եւ ֆինանսական այլ հաստատությունների հետ սերտ աշխատանքի արդյունքում հաջողվեց խթանել հետագա ներդրումներ ֆինանսական հաստատությունների կապիտալում: Այսպես, ճգնաժամային նման իրավիճակում 8 բանկեր իրենց կապիտալները համալրեցին ավելի քան 35 մլրդ դրամով: 9 ապահովագրական ընկերությունների նույնպես հաջողվեց կապիտալը համալրել 4.5 մլրդ դրամով:

Ընդհանուր առմամբ՝ կարելի է ասել, որ 2009թ. երկրորդ կեսը բեկումնային էր տնտեսության ինչպես իրական, այնպես էլ ֆինանսական հատվածների վերականգնման համար: Տարվա երկրորդ կեսին վարկավորման շուկայի զգալի աշխուժացումը ապահովեց տարեկան կտրվածքով վարկային ներդրումների մոտ 13% աճ, այնինչ Արեւելյան Եվրոպայի գրեթե բոլոր երկրներում վարկային ներդրումների նվազում է արձանագրվել: Նմանատիպ իրավիճակ կարելի է արձանագրել նաեւ ավանդային շուկայում: Այս տեսանկյունից Հայաստանին կարելի է համարել առաջատար: Ի տարբերություն այլ երկրների՝ ՀՀ-ում ավանդների արտահոսք չնկատվեց, ավելին՝ բանկային համակարգի ավանդներն աճել են 39%-ով, մինչդեռ անգամ տնտեսական աճ գրանցած հարեւան Ադրբեջանում ավանդների անկում է արձանագրվել:

Հատկանշական է այն փաստը, որ տնտեսական անկման նման պայմաններում զգալի աճել է ֆինանսական միջնորդությունը: Այսպես, բանկային համակարգի ակտիվներ / ՀՆԱ հարաբերակցությունը տարեվերջին

կկազմի ավելի քան 42%, ինչը 14 տոկոսային կետով կգերազանցի նախորդ տարվա ցուցանիշը: Տնտեսական անկման պայմաններում տվյալ ցուցանիշի նման աճը ցույց է տալիս ֆինանսական միջնորդության իրական մակարդակը եւ բնակչության վստահության բարձր մակարդակը բանկային համակարգի ու տնտեսական քաղաքականություն իրականացնող մարմինների նկատմամբ:

Ըստ մեր գնահատականների՝ տարին կավարտենք գների կայունության վերին նշածողի՝ 5.5%-ի մոտ: Տնտեսության վարկավորման նշված աճի եւ գնաճի սահմանային ցուցանիշի նման համադրումը մեզ թույլ է տալիս պնդել, որ թե՛ տնտեսության ակտիվության խթանման, թե՛ իր հիմնական նպատակին հասնելու տեսանկյունից ԿԲ իրականացրած քաղաքականությունը կարելի է համարել հաջողությամբ հավասարակշռված:

Ճգնաժամը ողջ աշխարհում հստակ ցույց տվեց, որ ֆինանսական կայունության համար երկրները ոչ միայն պետք է, այլև պատրաստ են շատ բարձր գին վճարել, ինչպես նաեւ կարճաժամկետ առումով դա գերադասել շատ այլ նպատակներից: Չարգացումները ցույց տվեցին, որ անառողջ ֆինանսական համակարգերն ըստ էության միայն կլանեցին հակառակ ռեսուրսներ՝ առանց զգալի կերպով աջակցելու տնտեսության վերականգնմանը կամ աճին: Իսկ որտեղ կանխարգելիչ կոչող վերահսկողությունը զուգակցվեց համակարգային կայունության ապահովող անհրաժեշտ միջոցառումներով, արդյունքները խոսուն են: 2009-ին Հայաստանը դարձավ այս տիպի ակնառու օրինակ՝ ֆինանսական կայունության ապահովումը բերեց մակրոտնտեսական անմիջական եւ շոշափելի արդյունքների:

Իհարկե՝ այս արդյունքները մեզ համար ոչ թե հանգստության դափնիներ են, այլ միայն ապագա մարտահրավերները դիմագրավելու վճռակալության գրավական: Ճգնաժամը դեռեւս չի վերջացել, 2010-ին մենք դեռ բազում անելիքներ ունենք, սակայն վստահ եմ, որ միասնաբար՝ արդյունավետ համագործակցությամբ կարող ենք հաջողությամբ հաղթահարել դրանք: ■